ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

13 դեկտեմբերի 2015թ. **N 99-Ա**
ք.Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2015 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվե նշանակելու մասին» թիվ ՆՀ-754-Ն հրամանագրով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն նշանավել է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին: Նշված հրամանագիրը 2015 թվականի հոկտեմբերի 9-ին հրապարակվել է Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում՝ թիվ 67 (1156):

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 1997 ընտրական տեղամաս:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հանրաքվեի կազմակերպման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված կարգով հանրապետության տարածքում կազմավորված է 41 ընտրատարածք: Նույն օրենսգրքի 9-րդ հոդվածին համապատասխան կազմավորված է հանրաքվեի հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով, հանրաքվեի ընտրատարածքային և տեղամասային հանձնաժողովներ: Հանրաքվեի ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը:

Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը 2015 թվականի դեկտեմբերի 13-ին հիմք ընդունելով հանրաքվեի տեղամասերում, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, կազմել է արձանագրություն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Համաձայն նշված արձանագրության՝

Հանրաքվեի մասնակիցների հիմնական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թիվը	2.547.916
Քվեարկության օրը հանրաքվեի տեղամասերում կազմված լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թիվը	4
Ըստ գտնվելու վայրի լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թիվը	16.854
Հաշվառում չունեցողների լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թիվը	277
Ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թիվը	140
Ստացիոնար բուժհաստատություններում կազմված լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թիվը	1.542
Ձերբակալված անձանց պահելու վայրերում կազմված լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թիվը	0
Էլեկտրոնային եղանակով քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը	265
Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը	2.566.998
Քվեարկության մասնակիցների թիվը	1.302.613
Այդ թվում՝ նույնականացման քարտերով քվեարկության մասնակիցների թիվը	189.197
Տեղամասային հանձնաժողովներին հատկացված քվեաթերթիկների թիվը	2.640.000
ելունդների համարները	1-2.640.000
Տեղամասային հանձնաժողովներում մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվը	1.337.670
Անվավեր քվեաթերթիկների ընդհանուր թիվը	53.435
«ԱՅՈ» քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը	825.521
«ՈՉ» քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը	421.568
Քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեարկության ծրարների ընդհանուր թիվը	1.300.343
Անճշտությունների գումարային չափը	555

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի համաձայն. «Հանրաքվեի հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկումը, հանձնաժողովներում դիմումների (բողոքների) և առաջարկությունների քննարկումը, ընտրատարածքային հանձնաժողովում տեղամասային հանձնաժողովի քվեարկության արդյունքների վերահաշվարկը կատարվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում»:

Վերոհիշյալ իրավանորմերի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 12-րդ մասի կանոնակարգումներին համապատասխան՝ հանրաքվեի նշանակվելուց հետո՝ մինչև արդյունքների ամփոփումը, հանձնաժողովները բողոքներին և դիմումներին պատասխանում, ինչպես նաև դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են հնգօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան համապատասխանաբար մինչև քվեարկության նախորդ օրը կամ մինչև հանրաքվեի արդյունքների ամփոփումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովում ստացվել է 94 դիմում, որից 12-ը եղել են տեղեկատվություն ստանալու վերաբերյալ:

Ներկայացված բոլոր դիմումները քննարկվել են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 45-րդ, 46-րդ և 47-րդ հոդվածների պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կողմից և կայացվել են համապատասխան որոշումներ, տրվել գրավոր պատասխաններ:

Դիմումների քննարկման օրվա և ժամի մասին դիմումատուները եղել են պատշաճ ծանուցված, իսկ դիմումների քննության արդյունքում կայացված որոշումները սահմանված կարգով ուղարկվել են դիմումատուներին և հրապարակվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում: Դիմումատուները, որպես կանոն, ներկայացել են իրենց դիմումների քննարկմանը և դիմումի քննության ընթացքում լիարժեք ծավալով ապահովվել է վերջիններիս լսվելու իրավունքը: Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի բոլոր նիստերն արձանագրվել են սահմանված կարգով և ամբողջ ծավալով ուղիղ ժամանակային ռեժիմում առցանց (on-line) հեռարձակվել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, որից հետո տեսագրություններն արխիվացվել և տեղադրվել են հանձնաժողովի կայքում:

Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովին ներկայացված դիմում-բողոքներից մեկը վերաբերել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011թ. հուլիսի 29-ի թիվ 36-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն ստուգարքի հիման վրա մասնակցին 2012 թվականին 3 տարի ժամկետով տրված ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականների ուժի մեջ գտնվելու ժամկետը երկարաձգելուն և ներկայացված է եղել Հայ Ազգային կոնգրես խմբակցության ղեկավար Լևոն Զուրաբյանի կողմից: Հայաստանի

Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ N 67-Ա որոշմամբ դիմումը բավարարվել է: Նույնաբովանդակ դիմում է ներկայացված եղել նաև «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանի կողմից:

Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովին ներկայացված ԱԻՄ ներկայացուցչական խորհրդի անունից Պարույր Հայրիկյանի՝ դիմումով պահանջվում էր հանրաքվեն կասեցել: Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 15 թիվ 72-Ա որոշմամբ դիմումը մերժվել է:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության 24.11.2015թ. դիմումով խնդրվել է պարզաբանում: Հայաստանի Հանրապետություն կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 80 որոշմամբ տրվել է պարզաբանում:

«Իրազեկ Քաղաքացիների Միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության 26.11.2015թ դիմումի քննությամբ Հայաստանի Հանրապետության

հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը 2015թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 82-Ա որոշմամբ. դիմումը՝ քարոզչական պաստառը վերացնելու մասով պահանջը համարել է բավարարված, իսկ սոցիալական ցանցերով իրականացվող քարոզչության մասով՝ առարկայազուրկ:

Հանրաքվեի քվեարկության օրը ստացվել է երեք դիմում, իսկ քվերակությունից հետո 69 դիմումներ: Ներկայացված դիմումները հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կողմից քննարկվել են և կայացվել են համապատասխան որոշումները:

2015 թվականի դեկտեմբերի 11-ին ստացվել է դիմում ՀՀ Ազգային Ժողովի «Հայ ազգային կոնգրես» խմբակցություն ղեկավար, ԱԺ պատգամավոր Լևոն Զուրաբյանի կողմից՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին անցկացված Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի արդյունքները անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Ներկայացված դիմումով առաջ են քաշվում մի քանի հիմնահարցեր՝

- հաշվի չեն առնվել ընտրությունների նախապատրաստման և քարոզչության ընթացքում տեղի ունեցած խախտումները, որոնք կարող էին և ազդել են ընտրությունների արդյունքների վրա,

- նույնականացման քարտերով կազմակերպված քվեարկությունը որևէ վերահսկողական օրենսդրական լուծում չի ունեցել և լրացուցիչ հնարավորություններ է ստեղծել ուրիշի փոխարեն կատարված քվեարկությունների և կրկնաքվեարկությունների համար,

- լրացուցիչ ցուցակները ծառայել են որպես ուղորդավորված ու վերահսկելի քվեարկության միջոց, քվեարկության ընթացքում տեղի են ունեցել տարաբնույթ խախտումներ՝ լցոնումներ, ուրիշի փոխարեն քվեարկություն, բացակա անձանց

փոխարեն քվեարկություն և դրանք կրել են համատարած, համակարգված և զանգվածային բնույթ,

- տեղամասային հանձնաժողովների՝ քվեարկության արդյունքներն ամփոփելու ընթացքում քվեաթերթիկների սխալ հաշվարկի, կամ հաշվարկի արդյունքների կեղծման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունների ելակետային տվյալները փոփոխման, վերադաս ընտրական հանձնաժողովների կողմից առանձին տեղամասերի արդյունքների փոփոխման միջոցով կեղծիքներ, որոնք նույնպես ազդել են քվեարկության արդյունքների վրա,

- վերահաշվարկի պահանջի վերաբերյալ դիմումները՝ ուղղված ընտրատարածքային հանձնաժողովներին չեն բավարարվել ամբողջությամբ՝ իբրև թե ժամանակի անբավարարության պատճառաբանությամբ, թեև օրենքով սահմանված է նման դեպքերում այնպիսի աշխատաոճ և այնպիսի աշխատանքային ռեժիմ, որը հնարավորություն կտար նման արգելքից խուսափել:

Դիմումում արվում են եզրահանգումներ, որ.

- Հանրաքվեի մասնակիցների ազատ կամարտահայտություն տեղի չի ունեցել.

- Խախտվել է քարոզչության շրջանում ԱՅՈ-ի և ՈՉ-ի կողմնակիցների հավասար մրցակցության իրավունքը, միջամտություն է եղել խոսքի, հավաքների ազատության իրավունքի իրացմանը.

- ԱՅՈ-ի հաղթանակը ապահովելու համար մեծ ծավալներով օգտագործվել է վարչական ռեսուրսը՝ օրենքի խախտմամբ կառավարության անդամներին քարոզչությանը մասնակից դարձնելով.

- Ազգային Ժողովի իշխանական մեծամասնությունը ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների միջոցով լայն հնարավորություն է ստեղծել ընտրակեղծիքներ կատարելու համար.

- Հանրաքվեի արդյունքները կեղծելուն գործուն մասնակցությունն է ունեցել ցուցակները կազմող եւ վարող լիազոր մարմինը.

- Խախտվել է քվեարկության գաղտնիությունը.

- Կատարվել է ընտրողների զանգվածային կաշառում, ուղղորդում և այլն.

- ԱՅՈ-ի կողմնակիցների, այդ կուսակցությունների ակտիվիստների, վստահված անձանց կողմից վերահսկվել է ընտրությունները «կարուսել» կոչվող քվեարկության գործադրմամբ.

- արձանագրվել են ուրիշի փոխարեն քվեարկությունների հարյուրավոր դեպքեր, քվեարկվել է հանրապետությունից բացակայող քաղաքացիների փոխարեն, բազմաթիվ քաղաքացիներ հայտնաբերել են, որ իրենց անվան դիմաց արդեն եղել են քվեարկություններ,

- տեղամասերում կատարվել են լցոնումներ,

- տեղի են ունեցել հանձնաժողովի անդամների, վստահված անձանց, դիտորդների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ ահաբեկումներ, հարձակումներ, բռնություններ, խոչընդոտվել է նրանց լիազորությունների իրականացումը,

- ընտրական տեղամասերում գտնվել են տեղամասում գտնվելու իրավունք չունեցող անձինք, ովքեր խաթարել են ընտրական գործընթացը

- ընտրական հանձնաժողովները հանդես են բերել անգործություն, որոշ դեպքերում նաև հանցավոր գործողություններ

- չի պաշտպանվել քաղաքացիների քվեարկելու և ազատորեն իրենց կամքը արտահայտելու իրավունքը

- խախտվել են Ընտրական օրենսգրքի և «Հանրաքվեի մասին» օրենքի հիմնական դրույթները և այլն:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն.

«5. Եթե քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել հանրաքվեի արդյունքների վրա, ապա կենտրոնական հանձնաժողովը որոշում է ընդունում հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները:

6. Եթե հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ընթացքում կամ հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու ընթացքում տեղի են ունեցել սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել հանրաքվեի արդյունքների վրա, ապա կենտրոնական հանձնաժողովը որոշում է ընդունում հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու մասին և նշանակում է նոր քվեարկություն:»:

Նշված իրավանորմի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը գտնում է, որ հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելը կարելի է միայն այն պարտադիր պայմանով, որ թույլ տրված խախտումները բացառեն հանրաքվեի քվեարկության իրական արդյունքները ճշգրտորեն որոշելու հնարավորությունը: Այսինքն, բավարար չէ խախտումների պարզ թվարկումը, այլ պահանջվում է ապացուցել, որ հատկապես այդ խախտումների արդյունքում հնարավոր չէ պարզել հանրաքվեի իրական պատկերը: Հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու համար պետք է պարզել, որ հանրաքվեի կազմակերպման ու անցկացման, ինչպես նաև քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում տեղի են ունեցել «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի խախտումներ, երկրորդ՝ այդ արձանագրված խախտումները պետք է կասկածի տակ դնեն քվեարկության արձանագրված արդյունքները, երրորդ՝ խախտումների բնույթը պետք է լինի այնպիսին, որ հանրաքվեի արդյունքների ամփոփման կամ բողոքի քննարկման ժամանակ արդեն հնարավոր չէ ստույգ որոշել քվեարկության մասնակիցների կամաարտահայտության իրական արդյունքը: Այսինքն, հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ է, որ խախտումների հետևանքները կրեն անդառնալի բնույթ, պետք է կորսված լինի

քվեարկության մասնակիցների կամաարտահայտությունը ստույգ պարզելու հնարավորությունը: Վերոգրյալի համատեքստում հանձնաժողովը գտնում է, որ եզրահանգումներ կատարելու համար անհրաժեշտ է պարզել այն հանգամանքը, թե վկայակոչված խախտումները որքանով են հիմնավոր, արդյոք դրանք ազդել են հանրաքվեի արդյունքի վրա:

Ժողովրդավարական ընտրությունների կամ հանրաքվեի անցկացումը ենթադրում է մասնակիցների իրավունքը՝ առաջադրելու արդյունքներն անվավեր ճանաչելու հարց: Դրա հետ միասին նման հարցադրման և հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ են ծանրակշիռ հիմքեր: Պետք է հաստատվեն օրենսդրության այնպիսի խախտումներ, որոնք թույլ չեն տալիս վստահորեն վերականգնելու հանրաքվեի իրական արդյունքները:

Այսպիսով, հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելն իրենից ներկայացնում է բավականին լուրջ քաղաքական և իրավական «զենք», որը պետք է օգտագործվի միայն բացառիկ դեպքերում: Եթե հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելը բացառությունից դառնում է կանոն, կամ երբ հանրաքվեի արդյունքները վիճարկելը դառնում է հանրաքվեի պրոցեսի հերթական պարտադիր փուլ, ապա նման համակարգի արդյունավետությունը, ինչպես նաև բարձր իրավական կուլտուրայի առկայությունը իրավմամբ կասկածի տակ կարող է դրվել:

ՀՀ Սահմանադրության համաձայն (հոդված 2)՝ Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Սահմանադրական այս նորմից բխում է, որ ժողովրդի անմիջական իշխանության դրսևորում կարելի է համարել միայն այն հանրաքվեները, որոնք անցկացվել են ընտրողների ազատ կամաարտահայտությունը ապահովող պայմաններում, ընդհանուր, հավասար ընտրական իրավունքի սկզբունքների հիման վրա: Եթե հանրաքվեն անց է կացվել այդ պայմաններում, ապա պետությունը պետք է ապահովի հանրաքվեի արդյունքների ճանաչումը:

Հանրաքվեի արդյունքների բողոքարկումը չպետք է դիտարկել որպես գործընթացի հերթական փուլ: Հանրաքվեի արդյունքները կարող են անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, երբ առկա են հիմնավոր ապացույցներ, որ քվեարկության և հանրաքվեի արդյունքներն ամփոփելու ընթացքում տեղի ունեցած խախտումները թույլ չեն տալիս ճշգրտորեն սահմանելու հանրաքվեի քվեարկությանը մասնակցած քաղաքացիների կամաարտահայտության արդյունքները: Միևնույն ժամանակ ազատ հանրաքվեներ անցկացնելու սկզբունքը պահանջում է, որ եթե հանրաքվեի ընթացքում տեղի են ունեցել այնպիսի խախտումներ, որոնց պարագայում նման հանրաքվեն չի կարելի ազատ համարել, որոնք ստույգ չեն արտահայտում քվեարկության մասնակիցների կամաարտահայտությունը, ապա պետության պարտականությունն է ապահովել արդյունքները բողոքարկելու հնարավորություն:

Ինքնին հանրաքվեի հանձնաժողովների կողմից առանձին պրոցեսների խախտումը, չի կարող դիտարկվել որպես բավարար հիմք հանրաքվեի արդյունքների փոփոխման համար:

Հանրաքվեի ժամանակ որոշ ձևական պահանջների պահպանման առումով կարող են իմաստազրկել հանրաքվեների սահմանադրական, ժողովրդավարական էությունը, որպես ազատ կամաարտահայտության ինստիտուտ: Հենց սրանում է նաև հանրաքվեների տարբերությունը կառավարչական բյուրոկրատական պրոցեսներից: Հանրաքվեի էությունը կայանում է քաղաքացիների կողմից իրենց պատկանող քաղաքական իրավունքների իրականացման մեջ: Իսկ այդ պրոցեսի արդյունքները չեն կարող որոշվել բացառապես բյուրոկրատական հիմքերով:

Միայն հանրաքվեի արդյունքների վրա ազդող խախտումների առկայության պարագայում կարող են արդյունքներն անվավեր ճանաչվել: Հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելիս պետք է դրվի քաղաքացիների հանրաքվեին մասնակցելու իրավունքի առաջնայնությունը: Հատկապես հանրաքվեի արդյունքներում է նյութականացվում քվեարկության մասնակիցների կամաարտահայտությունը: Այդ իսկ պատճառով հանրաքվեի արդյունքների պաշտպանման բավարար երաշխիքների ստեղծման հարցում կարևորվում է արձանագրված արդյունքների վավերականության կանխավարկածը: Եթե գործնականում այդ սկզբունքը չի պահպանվում հանրաքվեի հանձնաժողովների կողմից, ապա անխուսափելիորեն ձևավորվում են մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս նենգափոխել հանրաքվեի արդյունքները ի հեճուկս հանրաքվեի մասնակիցների կամաարտահայտության:

Զուտ ընթացակարգային խախտումները ոչ մի պարագայում չպետք է հանգեցնեն քվեարկության արդյունքների անվավերականությանը: Բոլոր այն դեպքերում, երբ հաշվի առնելով այդ խախտումները, այնուամենայնիվ, հնարավոր է ամփոփել քվեարկության արդյունքները, ապա քվեարկությունը պետք է համարել կայացած: Օրենքը չի սահմանում խախտումների տեսակներ կամ քանակ, ինչպես նաև սուբյեկտային կազմ, որոնց կողմից կատարված խախտումները ավտոմատ կերպով կհանգեցնեն հանրաքվեի անվավերության: Բոլոր դեպքերում հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելը կարելի է միայն այն պարտադիր պայմանով, որ թույլ տված խախտումները կբացառեն ճշգրտորեն որոշել քվեարկության մասնակիցների կամաարտահայտության արդյունքները: Այսինքն, բավարար չէ խախտումների պարզ թվարկումը, այլ պահանջվում է ապացուցել, որ հատկապես այդ խախտումների արդյունքում հնարավոր չէ պարզել իրական կամաարտահայտությունը:

Հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ է, որ խախտումների հետևանքները կրեն անդառնալի բնույթ, պետք է կորցված լինի քվեարկության մասնակիցների կամաարտահայտությունը ստույգ պարզելու հնարավորությունը: Քանի դեռ նման հնարավորությունը պահպանվում է (մասնավորապես, այն կարող է լինել քվեարկության արդյունքների վերահաշվարկը) հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելը, անթույլատրելի է:

Այդ առումով ուշագրավ է և թերևս կիրառելի սույն իրավահարաբերությունների նկատմամբ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հիմքերի վերաբերյալ նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդրադարձը: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2003 թվականի փետրվարի 19-ին կայացած ընտրության արդյունքները վիճարկելու վերաբերյալ գործով կայացված Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման մեջ, մասնավորապես, նշվում է.

- ընտրություններն անվավեր ճանաչելու կամ չճանաչելու որոշումը յուրաքանչյուր դեպքում կախված է կոնկրետ հանգամանքներից և պետք է հաշվի առնել իրավաբանորեն փաստարկված խախտման լրջությունն ու ծանրությունը, խախտումների ընդգրկման ծավալը, խախտումներ կատարելու միջոցներն ու ձևերը,

- ընտրությունների արդյունքները վիճարկելու մասին գործեր քննելիս՝ սահմանադրական դատարանը պետք է ելնի ոչ միայն Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, այլև ընտրական գործընթացի, ողջ ընտրական համակարգի հուսալիության ու վստահելիության հանգամանքից՝ օրենսդրությանը համապատասխան այն կազմակերպելու և անցկացնելու առումով,

- ընտրական իրավունքների ապացուցված խախտումները կարող են հիմք հանդիսանալ ընտրությունների արդյունքները վերանայելու համար, սակայն այդ վերանայման էական բովանդակությունը պետք է կազմի այն հարցի պատասխանը, թե արդյո՞ք առկա իրավախախտումներն այնպիսի ընդգրկում ունեն, որ կարող են կասկածի տակ դնել ամբողջ ընտրությունների արդյունքները և վավերությունը,

- որևէ ընտրատեղամասում կամ տարածքում կատարված խախտումները չեն կարող հիմք հանդիսանալ այլ տեղամասերում նմանատիպ խախտումների մասին ենթադրություններ անելու կամ վստահության աստիճանը կասկածի տակ դնելու համար:

Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հիմք կարող են հանդիսանալ միայն իրավաբանորեն փաստարկված այն կոնկրետ խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա,

-ընտրությունների արդյունքները կարող են անվավեր ճանաչվել, եթե խախտումներն էապես ազդել են թեկնածուների ստացած ձայների հարաբերակցության վրա և ընդհանուր արդյունքն աղավաղված է:

Վերոգրյալի հիման վրա Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը գտնում է, որ.

- հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու համար հիմք հանդիսացող խախտումների որոշակի ցանկ գոյություն չունի.

- հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելը չի կարող մեխանիկական բնույթ ունենալ.

- հանրաքվեի պրոցեսում թույլ տրված ցանկացած խախտում ինքնին հիմք չէ հանրաքվեի արդյունքները անվավեր չճանաչելու համար, քանի դեռ պարզված չէ ընտրությունների արդյունքների վրա այդ խախտումների ազդեցության իրական կամ հնարավոր չափը:

Դիմումով ներկայացված անվավերության առաջին հիմքը վերաբերում է մինչև հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածի սկզբին և քարոզչության ժամանակահատվածում ըստ դիմումատուի թույլ տրված խախտումներին: Ներկայացված դատողությունները վերաբերում են առանձին հանգամանքների վերաբերյալ տրված գնահատականներին: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2015թ. հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվե նշանակելու մասին» թիվ ՆՀ-754-Ն հրամանագրով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն նշանակել է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին: Նշված հրամանագիրը 2015 թվականի հոկտեմբերի 9-ին հրապարակվել է Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում՝ թիվ 67 (1156):

Նշվածից ակնհայտ է, որ հանրաքվեի նախապատրաստումն սկսվել է 2015 թվականի հոկտեմբերի 10-ից, մինչդեռ դիմումում որպես նախապատրաստման ժամանակահատվածի խախտումներ են վկայակոչվում ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի» հեղինակ հանդիսանալու հանգամանքը և հայեցակարգի քարոզով հանդես գալու հանգամանքը», 05.10.2015թ. Ոչ-ի կողմնակիցների Ազգային ժողովի դարպասների մոտ իրազեկված հավաքի ժամանակ տեղի ունեցած միջադեպը, 25.09.2015թ. Գյումրիում կայանալիք հանրահավաքի հետ կապված հանգամանքներ: Հարկ է նկատել, որ թեկուզև միայն ամսաթվով պայմանավորված ակնհայտ է, որ վկայակոչված հանգամանքները որևէ կապ չունեն հանրաքվեի նախապատրաստման հետ: Ինչ վերաբերում է մնացած փաստարկներին, ապա բոլորի վերաբերյալ էլ տրվել են համապատասխան պարզաբանումներ, իսկ հակառակ պնդումներ ներկայացնելը չի հիմնավորվում որևէ լրացուցիչ փաստական հանգամանքով:

Ինչ վերաբերում է պետական պաշտոն զբաղեցնող որոշ անձանց ընտրական գործընթացներին մասնակցելու հարցին, ապա՝

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«Արգելվում է քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝

ա) պետական և համայնքային պաշտոններ զբաղեցնողներին, բացառությամբ քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնողների, ինչպես նաև ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս.

բ) սահմանադրական դատարանի անդամներին, դատավորներին, դատախազներին, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության

ծառայողներին, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողներին, զինծառայողներին.

գ) հանրաքվեի հանձնաժողովի անդամներին.

դ) բարեգործական և կրոնական կազմակերպություններին.

ե) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին»:

Նշված իրավանորմով հստակ և աներկբա սահմանված են այն պաշտոնատար անձինք, ովքեր չեն կարող զբաղվել քարոզչությամբ: Նշված օրենսդրական պահանջը կամ սահմանափակումը չի վերաբերում քաղաքական կամ հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց:

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Սույն օրենքի իմաստով քաղաքական պաշտոններ են Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, Հայաստանի Հանրապետության նախարարների և Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների պաշտոնները»:

Ներկայացված իրավանորմից ակնհայտ է, որ «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չունի որևէ սահմանափակում, համաձայն որի քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք չեն կարող իրականացնել քարոզչություն:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի իրավանորմերից ակնհայտ է, որ պաշտոնատար անձինք, այդ թվում՝ քաղաքական պաշտոն զբաղեցնողները, օրենքով սահմանված սահմանափակումների հաշվառմամբ ազատ են իրականացնել քարոզչություն: Ինչպես ակնհայտ է նշված նորմերից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող ծառայողներին արգելված չէ քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝ օրենքով նախատեսված որոշակի և հստակ սահմանափակումների պահպանման պայմանով: Համապատասխան սահմանափակումներ նախատեսած նորմերն արգելքներն ուղղակիորեն սահմանում են միմիայն այն դեպքերի համար, երբ քարոզչությունն ու ցանկացած բնույթի քարոզչական նյութի տարածումն իրականացվում է տվյալ անձանց լիազորություններն իրականացնելիս: Ընդ որում՝ օրենքը նշված գործունեությունը կամ գործողությունները տվյալ անձանց կողմից իրականացնելու սահմանափակում է նախատեսում ոչ թե նրանց իրավասությունների իրականացման հետ համատեղության պայմաններում, ինչպես նշված է բողոքում, այլ հենց այդ իրավասություններն իրականացնելիս, այսինքն՝ օրենքն արգելում է, պաշտոնատար անձին իրականացնելու հանրաքվեի քարոզչություն՝ հանդես գալով հենց որպես պաշտոնատար անձ՝ քարոզչությունն

իրականացնելով իրեն վերապահված այս կամ այն իրավասության գործադրմամբ, օգտագործմամբ կամ միջոցով:

Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը փաստում է նաև, որ ամբողջ քարոզչության ժամանակահատվածում քարոզչության կանոնների խախտման վերաբերյալ որևէ դիմում դատարաններ ու ընտրական հանձնաժողովներ չեն ներկայացվել, բացառապես մեկ դիմումի, որը վերաբերում էր քարոզչական պաստառները խախտումով փակցված հանգամանքին և սոցիալական ցանցով իրականացվող քարոզչությանը:

Ինչ վերաբերում է հանրաքվեի մասնակիցների ցուցակների վերաբերյալ դատողություններին, ապա հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը փաստում է, որ դիմումում ներկայացված բոլոր փաստարկները տարբեր սուբյեկտների կողմից հնչել են հանրաքվեի նախապատրաստման փուլի ընթացքում և բոլորի վերաբերյալ էլ մշտապես և օպերատիվ կերպով ՀՀ ոստիկանության կողմից տրվել են պարզաբանումներ, դրանք եղել են հրապարակային և զետեղվել են ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքում: Եվ ցուցակների վերաբերյալ ներկայացվող դատողությունները չեն հանդիսանում օրենքի խախտում և չեն ազդել հանրաքվեի արդյունքի վրա:

Ըստ դիմումատուի՝ նույնականացման քարտերով կազմակերպված քվեարկությունը որևէ վերահսկողական օրեսդրական լուծում չի ունեցել և լրացուցիչ հնարավորություններ է ստեղծել ուրիշի փոխարեն կատարված քվեարկությունների և կրկնաքվեարկությունների համար: Հանրաքվեի հանձնաժողովները հանդիսանում են օրենքը կիրառող և ոչ երբեք օրենսդիր գործառույթներով մարմին, սակայն հարկ է փաստել, որ «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանել են բազմաթիվ իրավունքներ տեղամասային հանձնաժողովների անդամների, վստահված անձանց, դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար իրականացնելու լիակատար հասարակական վերահսկողություն գործընթացի նկատմամբ՝ ցուցակների հրապարակում, այդ թվում՝ ներբեռնման հնարավորությամբ, վստահված անձի համար առանձին աշխատատեղի նախատեսում, տեսանկարահանման և լուսանկարահանման հնարավորություններ, վերահաշվարկի ժամանակ քաղվածքների կատարում և այլն:

Երբ քաղաքացին գալիս է տեղամաս, ապա առաջին գործողությունը գրանցման համար պատասխանատու անդամի կողմից ընտրողի ինքնությունը ստուգելն է, որով պարզվում է տվյալ քաղաքացու՝ այդ տեղամասի քվեարկության մասնակիցների ցուցակում ընդգրկված լինելու հանգամանքը: Նշված գործողության կատարումից հետո ցուցակում քաղաքացու անուն-ազգանունի դիմացի դատարկ սյունակում լրացվում է անձը հաստատող փաստաթղթի տվյալները, որից հետո քվեարկության մասնակիցը ստորագրում է այդ տվյալների դիմաց՝ նրա ստորագրության համար նախատեսված սյունակում, այնուհետև գրանցումն իրականացնող անդամն իր անհատական կնիքն է դնում ստորագրության դիմաց՝ համապատասխան սյունակում:

Հարկ է նկատել, որ ՀՀ ընտրական օրենսգրքով 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ընտրողների գրանցման և ընտրողներին քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող անդամների աշխատատեղերից յուրաքանչյուրի միջև նախատեսվում է առնվազն մեկ աշխատատեղ վստահված անձի համար, որը լիարժեք հնարավորություն է տալիս այս գործընթացը վերահսկելու համար:

Նշվածից ակնհայտ է, որ եթե անձը նախկինում արդեն իսկ ներկայացել է քվեարկության, ապա նրա վերաբերյալ տվյալները լրացված են ցուցակում, այսինքն, արդեն իսկ բացառվում է, որ կրկին անգամ տեղամաս այցելելով հենց քվեարկության մասնակիցների ցուցակի լրացման պահին այդ հանգամանքը չբացահայտվի:

Բերվող հաջորդ փաստարկը վերաբերում է, այն հանգամանքին, որ իբր լրացուցիչ ցուցակները ծառայել են, որպես ուղղորդավորված ու վերահսկելի քվեարկության միջոց:

Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը արձանագրել է, որ ըստ գտնվելու վայրի լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թիվը կազմել է 16.854: «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի համաձայն. «Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների՝ ընտրողների ցուցակները (այսուհետ՝ ցուցակներ) կազմելու և վարելու, քաղաքացիներին ցուցակներում ընդգրկելու, ցուցակներին առաջադրվող պահանջները, ցուցակների մատչելիությունը, ցուցակների անճշտությունների վերաբերյալ դիմումները քննարկելու և ցուցակները ճշտելու կարգը, հանձնաժողովներին ցուցակներ տրամադրելը սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի երկրորդ գլխում համապետական ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակների կազմելուն, վարելուն, քաղաքացիներին ընտրողների ցուցակներում ընդգրկելուն, ընտրողների ցուցակներին առաջադրվող պահանջներին, ցուցակների մատչելիությանը, ցուցակների անճշտությունների վերաբերյալ դիմումները քննարկելուն, ցուցակները ճշտելուն և հանձնաժողովներին ցուցակները տրամադրելուն վերաբերող դրույթներով սահմանված կարգով»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Համապետական ընտրությունների դեպքում այլ համայնքի հաշվառում ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացնում են դիմում՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու մասին՝ նշելով քվեարկության օրը գտնվելու վայրի հասցեն: Դիմումի ձևը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողին տրամադրում է տեղեկանք՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից նրա տվյալները հանելու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների

լրացուցիչ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Տեղեկանքի ձևը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը»:

Ինչ վերաբերում է «Քաղաքացի դիտորդ» դիտորդական առաքելության ուսումնասիրություններին, ապա նախ հարկ է նկատել, որ նման անվանումով հասարակական կազմակերպություն չի հավատարմագրվել դիտորդական առաքելություն իրականացնելու, իսկ ինչ վերաբերում է իրականացված հաշվարկին, ապա կատարված է ակնհայտ սխալ վերլուծություն, քանզի Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ քվեարկության օրվանից առաջ 30-րդ, 20-րդ, 10-րդ և քվեարկության նախորդ օրը, Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարող լիազոր մարմինը հրապարակում է Հայաստանի Հանրապետության **ընտրողների ռեգիստրում** ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նշելով նաև յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը», իսկ նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի. «Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը մշտապես վարվող փաստաթուղթ է, որը կազմվում է ըստ մարզերի և համայնքների: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, Հայաստանի Հանրապետության որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները»: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն էլ. «Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի, որում ընդգրկվում են սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք»: Նշված իրավանորմերից ակնհայտ է դիմողի վկայակոչած հիմնավորումների սխալ լինելը:

Դիմումատուների հաջորդ փաստարկը վերահաշվարկի պահանջի վերաբերյալ դիմումները՝ ուղղված ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին չեն բավարարվել ամբողջությամբ՝ իբրև թե ժամանակի անբավարարության պատճառաբանությամբ, թեև օրենքով սահմանված է նման դեպքերում այնպիսի աշխատառոճ և այնպիսի աշխատանքային ռեժիմ, որը հնարավորություն կտար նման արգելքից խուսափել:

Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը փաստում է, որ վերահաշվարկի դիմումներ ներկայացված են եղել թվով 12 ընտրատարածքների թվով 79 տեղամասերում: Թվով 7 ընտրատարածքներում պայմանավորված վերահաշվարկների դիմումների թվով վերահաշվարկվել են բոլոր տեղամասերի քվեարկության արդյունքները: Ընդհանուր առմամբ ներկայացված 79 դիմումների պարագայում վերահաշվարկվել է 53 տեղամասերի քվեարկության արդյունքներ:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է.

«Հանրաքվեի հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկումը, հանձնաժողովներում դիմումների (բողոքների) և առաջարկությունների քննարկումը, ընտրատարածքային հանձնաժողովում տեղամասային հանձնաժողովի քվեարկության արդյունքների վերահաշվարկը կատարվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Թեկնածուն, վստահված անձը, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաեւ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն»:

Վերհաշվարկ կատարելու կարգն ու պայմանները մանրամասն կանոնակարգված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածում: Համաձայն նշված իրավանորմի 6-րդ մասի. «Վերահաշվարկի աշխատանքներն սկսվում են վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից, և դադարեցվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, ժամը 14.00-ին (այսուհետ՝ վերահաշվարկի վերջնաժամկետ): Վերահաշվարկ իրականացնելիս ընտրական հանձնաժողովն աշխատում է առանց հանգստյան օրերի՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն: Ընտրական հանձնաժողովը շարունակում է վերահաշվարկը ժամը 18.00-ից հետո, եթե չի ավարտել ընտրական տեղամասի արդեն սկսած վերահաշվարկը, ինչպես նաև այն դեպքերում, եթե մինչև ժամը 18.00-ն աշխատելու պայմաններում մինչև վերահաշվարկի վերջնաժամկետը հնարավոր չէ ավարտել սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված քվեարկության արդյունքների վերահաշվարկը»:

Օրենքը հստակ սահմանել է ժամանակը, երբ պետք է սկսվեր վերահաշվարկը: Այն ընտրատարածքներում, որտեղ առկա են եղել մեծ թվով դիմումներ դեկտեմբերի 8-ին առավոտյան ժամը 9.00-ին իրականացրել են վիճակահանություն, որոշել հերթականությունը և սկսել աշխատանքները: Ավելին, հարկ է նկատել, որ

իրականացված վիճակահանությունների վերաբերյալ որևէ դիմում կամ բողոք հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով ներկայացված չի եղել:

Դիմումի հաջորդ փաստարկն այն է, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել տարաբնույթ խախտումներ՝ լցոնումներ, ուրիշի փոխարեն քվեարկություն, բացակա անձանց փոխարեն քվեարկություն և դրանք կրել են համատարած, համակարգված և զանգվածային բնույթ: Ներկայացվածի հիմնավորում վկայակոչվում են ընդհանուր թվով 176 տեղամասերի կամ, որ նույնն է տեղամասերի ընդհանուր թվի 8.8%-ի վերաբերյալ դատողություններ, ի դեպ նշված հանգամանքներից մի մասը հայտարարությունների կամ կարծիքների շարքից է: Կան փաստարկներ, որոնք ակնհայտորեն չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, որպես խախտում 163-րդ համարի տակ նշվում է, որ «15:24-ի դրությամբ ԿԸՀ-ն դեռ չեր հաղորդել մասնակցների մասնակցության թիվը, ինչը ընտրական օրենսգրքի խախտում է»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը համապետական ընտրությունների ժամանակ քվեարկության օրը՝ ժամը 9.00-ին, տեղեկություններ է հրապարակում ընտրությունների ընթացքի մասին, իսկ ժամը 12.00-ից սկսած՝ մինչեւ ժամը 21.00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ մարզերի (մարզում՝ նաեւ ըստ մարզկենտրոնների եւ մարզի՝ 10 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների) եւ Երեւան քաղաքի հրապարակում է տեղեկություններ մինչեւ նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ: Քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկությունների հրապարակումից հետո դրանք ըստ ընտրական տեղամասերի տեղադրվում են հանձնաժողովի համացանցային կայքում»: Նշված տեղեկությունները հրապարակվել են ուղիղ եթերում և որևէ ոոպեի խախտում չի արձանագրվել: Դիմումին կից իբրև ապացույցները ներկայացված տեսաձայնագրությունները և լուսանկարները վերաբերում են ընդհանուր թվով 43 տեղամասերի, որոնցից 7 տեղամասերի վերաբերյալ ներկայացված նյութերը ընդհանրապես որևէ խախտում չեն պարունակում: Մնացած նյութերը վերաբերում են բացառապես առանձին վերցրած եզակի հանգամանքների, մի մասն էլ լրատվական կայքերի ռեպորտաժներ են:

Ինչ վերաբերում է վիճակագրական բնույթի վերլուծությունների հիմքով ներկայացված եզրահանգումներին, ապա հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը փաստում է, որ նշվածը սոսկ կարող է գնահատվել որպես կարծիք կամ տեսակետ և չի կարող հիմք հանդիսանալ իրավական գնահատականներ տալու և միանշանակ եզրակացություններ կատարելու համար:

Այսպիսով, հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով ներկայացված 94 դիմումներից 3-ը՝ վերահասցեագրման կարգով ներկայացվել են համապատասխան ընտրատարածքային հանձնաժողովներին, 3-ը՝ ՀՀ գլխավոր դատախազություն, 8-ը ՀՀ ոստիկանություն, իսկ մնացածով կայացվել են որոշումներ կամ տրվել պատասխաններ:

Հանրաքվեի կազմակերպման ընթացքում, մինչև քվեարկության օրը հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովներին չի ներկայացվել որևէ դիմում կամ բողոք:

Հանրաքվեի քվեարկության օրվանից հետո հանրաքվեի 41 ընտրատարածքային հանձնաժողովներից դիմումներ են ստացել թվով 19-ում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ»: Զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր էլեկտրոնային կայքերում տեղ գտած ընտրախախտումների վերաբերյալ տեղեկություններն առավելագույն սեղմ ժամկետներում ճշգրտվել են համապատասխան հանձնաժողովների, պետական այլ մարմինների հետ և տեղեկությունների հաստատման պարագայում տրվել են համապատասխան ցուցումներ կամ հանձնարարություններ:

Նախընտրական քարոզչության կազմակերպման կարգի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի աշխատակազմի ներկայացուցիչները՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ կազմակերպել են շրջայց Երևան քաղաքում, իսկ ընտրատարածքային հանձնաժողովների ներկայացուցիչները՝ ընտրատարածքում գտնվող բնակավայրերում: Օրենքով չսահմանված վայրերում փակցված նախընտրական քարոզչական նյութեր հայտնաբերվելու դեպքում դրանք անմիջապես վերացվել են:

Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ 2015 թվականի նոյեմբերի 24-ից հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովում ձևավորվել է իրավիճակային վերլուծությունների կենտրոն, որի նպատակն է պատասխանել կամ պարզաբանումներ ներկայացնել էլեկտրոնային փոստով հանձնաժողովում ստացվող քաղաքացիների պարզաբանում կամ տեղեկատվություն հայցող նամակներին ու հարցումներին:

Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովն էլեկտրոնային փոստով ստացել է շուրջ 8 տասնյակ նամակներ տարբեր քաղաքացիներից, որոնք կրել են խորհրդատվություն կամ տեղեկատվություն ստանալու բնույթ: Բոլոր նամակներին տրվել են պատշաճ պատասխաններ, իսկ պատասխանները հրապարակվել են հանձնաժողովի համացանցային կայքում:

Իրավիճակային վերլուծությունների կենտրոնի կողմից հատկապես քվեարկության օրն ուսումնասիրվել են էլեկտրոնային կայքերում (panorama.am, news.am, hra.am, lurer.com, asparez.am, ilur.am, haynews.am, aravot.am, 1in.am, tert.am, slaq.am, galatv.am և այլն) և զանգվածային լրատվության միջոցներում ներկայացվող տեղեկությունները, պարզվել է տեղեկությունների հավաստիությունը, 50 հրապարակումներով ներկայացվել են պարզաբանումներ կամ տրամադրվել են տեղեկություններ, իսկ խախտումներին վերաբերող փաստերի հաստատման դեպքում հանձնաժողովի կողմից անմիջապես ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ խախտումները կանխելու, հետևանքները վերացնելու համար:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է.

«Հանրաքվեի հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկումը, հանձնաժողովներում դիմումների (բողոքների) և առաջարկությունների քննարկումը, ընտրատարածքային հանձնաժողովում տեղամասային հանձնաժողովի քվեարկության արդյունքների վերահաշվարկը կատարվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենգրքի 46-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված է տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու ինստիտուտը, նույն հոդվածի 10-րդ մասով սահմանվում է տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու հիմքերը և իրավական հետևանքները: Մասնավորապես ամրագրված է, որ քվեարկության օրվա ընթացքում տեղամասային հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել համապատասխան ընտրատարածքային հանձնաժողով քվեարկության օրը կամ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն:

Եթե բողոքի կամ դիմումի քննարկման արդյունքով ընտրատարածքային հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, իսկ խախտումը արտահայտված չէ անճշտություններում, ապա այդ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն ընտրատարածքային հանձնաժողովն անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերը ուղարկվում են դատախազություն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի քվեարկության օրվանից հետո ներկայացվել է ընդհանուր թվով 3 տեղամասում կամ տեղամասերի ընհանուր թվի 0.15%-ում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում: Նշված երեք տեղամասերում էլ կատարվել է վերահաշվարկ և գրանցվել են քվեարկության արդյունքների աննշան տարբերություններ:

Ներկայացված բոլոր դիմումները սահմանված կարգով քննարկվել են հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովների նիստերում: Դիմումները մերժվել են:

Նշված դիմումների քննությանն իրազեկված են եղել բոլոր դիմումատուները, սակայն չեն մասնակցել դիմումների քննության, իսկ կայացված որոշումները ոչ վերադասության և ոչ էլ վարչական արդարադատության կարգով չեն բողոքարկվել:

Հայաստանի Հանրապետությունում կազմավորված 1997 հանրաքվեի տեղամասերում «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի

1-ին մասով սահմանված սուբյեկտների կողմից ներկայացվել է հանրաքվեի քվեարկության արդյունքների վերահաշվարկի 79 դիմում: Նշված դիմումներից 25-ը ներկայացվել է «Հայ Ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի կողմից նշանակված հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների հատուկ կարծիք ներկայացրած անդամների և խմբակցության վստահված անձանց կողմից, 4-ը «Ժառանգություն» կուսակցության կողմից նշանակված հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների հատուկ կարծիք ներկայացրած անդամների և խմբակցության վստահված անձանց կողմից, 28-ը Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից նշանակված հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների հատուկ կարծիք ներկայացրած անդամների և խմբակցության վստահված անձանց կողմից, 6-ը Բարգավաճ Հայաստան խմբակցության վստահված անձանց կողմից, 8-ը Հայ Յեղափոխական դաշնակցություն խմբակցության վստահված անձանց կողմից և 8-ը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների հատուկ կարծիք ներկայացրած այն անդամների կողմից, որոնք նշանակված են եղել հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովների կողմից:

Ընդհանուր դիմումների հաշվառմամբ վերահաշվարկի պահանջի մասին դիմում է ներկայացվել հանրաքվեի տեղամասերի ընդհանուր թվի 3.95% վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Թեկնածուն, վստահված անձը, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն»:

Նույն հոդվածի 16-րդ մասի համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը մերժում է ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումը և վերահաշվարկ չի իրականացնում, եթե պահանջվել է քվեարկության արդյունքների վերահաշվարկի իրականացում սույն հոդվածի դրույթների խախտումով»:

Երկու տեղամասերի հետ կապված դիմումներն ըստ ընտրատարածքային հանձնաժողովի ներկայացվել են սահմանված ժամկետից հետո, որով

պայմանավորված դիմումները չեն ընդունվել: Նշված գործողությունների վերաբերյալ դիմում հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով ներկայացվել է վերահաշվարկ իրականացնելու ավարտից հետո, որով պայմանավորված դիմումն ըստ էության դարձել էր առարկայազուրկ:

Հանրապետությունում կազմավորված 1997 հանրաքվեի տեղամասերում որպես հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի անդամ ընդգրկված են եղել 15.976 քաղաքացիներ:

Քվեարկության օրը տեղամասային կենտրոններում ներկա են գտնվել 6447 վստահված անձ, որոնցից «Հանրապետական» (ՀՀԿ) խմբակցություն 3508, «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն 697, «Հայ Ազգային կոնգրես» խմբակցություն 742, «Օրինաց երկիր» խմբակցություն 621, «Հայ Յեղափոխական դաշնակցություն» խմբակցություն 489, «Ժառանգություն» խմբակցություն 390:

Ընդհանուր թվով 6447 վստահված անձանցից միայն 48 վստահված անձի կամ, որ նույնն է վստահված անձանց ընդհանուր թվի 0.7%-ի կողմից է ներկայացվել դիմում տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու մասին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված, թվով 1674 տեղամասային կենտրոններում ներկա են գտնվել ընդհանուր թվով 1821 տեղական դիտորդներ, իսկ թվով 1493 տեղամասային կենտրոններում աշխատել են զանգվածային լրատվության միջոցների ընդհանուր թվով 1886 ներկայացուցիչներ:

Քվեարկության օրը 41 ընտրատարածքային հանձնաժողովներից որևէ մեկում քվեարկության օրը դիմումներ չեն ստացվել: Քվեարկության օրվանից հետո 19 ընտրատարածքային հանձնաժողովներում ստացվել են մոտ հինգ տասնյակ դիմում-բողոքներ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի նախապատրաստման և անցկացման ընթացքում ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում է ներկայացվել միայն քաղաքացի Պարույր Հայրիկյանի կողմից՝ կապված իր դիմումով կայացված որոշման իրաչափության հետ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ ԴԴ-9-96272/15 գրության համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 13-ի դրությամբ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ չքննված գործ ՀՀ վարչական դատարանի վարույթում առկա չէ:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն.

«Կենտրոնական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ յոթերորդ օրը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների)

քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընտրատարածքային հանձնաժողովների որոշումները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, ամփոփում է հանրաքվեի արդյունքները և ընդունում որոշում հանրաքվեի արդյունքների վերաբերյալ»:

1997 տեղամասային ընտրական հանձնաժողովներից միայն թվով 93 տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգի համաձայն կատարվել գրառումներ, իսկ 1904 տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ: Այսինքն, գրառումներ են կատարվել տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանների ընդհանուր թվի միայն 4.6 տոկոսում:

Բոլոր ընտրատարածքային հանձնաժողովները՝ «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի մասով ամրագրված իրավանորմերի պահանջների համաձայն ուսումնասիրել են ընտրատարածքի տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները և թվով 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները՝ թիվ 13, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 25, 26, 28, 31, 33, 37, 38, 39, 40, 41 կազմել են համապատասխան արձանագրություններ գրառումների բացակայության վերաբերյալ, իսկ թվով 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները՝ թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 14, 24, 27, 29, 30, 32, 34, 35, 36 կայացրել են որոշումներ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ», որոնցով ամրագրվել է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի ընթացքում համապատասխան ընտրատարածքում կազմավորված հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 6.12.2015թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կողմից ամփոփվել է նաև Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 09.12.2015թ. «Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 2015թ. դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում սահմանված կարգի պահպանման վերաբերյալ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հաստատելու վերաբերյալ» թիվ 99-Ա որոշմամբ հաստատված մշտադիտարկման արդյունքներն ու եզրակացությունը, համաձայն որի.

2015թ. դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզարշավի (10.10.15-04.12.15թթ.), ինչպես նաև լռության օրը և քվեարկության օրը մինչև ժամը 20:00-ն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

10.10.2015-06.12.2015թթ. ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցություններից (պատգամավորական խմբերից), ինչպես նաև Հանրաքվեի քարոզչություն կատարող Կողմերից («Այո» կամ «Ոչ») հանձնաժողովը ստացել է 1 դիմում՝ Հայ Ազգային Կոնգրես խմբակցության ղեկավար՝ Լևոն Զուրաբյանից: Հանձնաժողովը Լևոն Զուրաբյանի կողմից բարձրացված հարցերին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պարզաբանում է տվել:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզչությանը մասնակցող Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցություններին (պատգամավորական խմբերին), ինչպես նաև հանրաքվեի քարոզչություն կատարող կողմերից («Այո» կամ «Ոչ») յուրաքանչյուրին վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման սկզբունքի խախտումներ չեն արձանագրվել:

Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կողմից քննարկվել է նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության տեղեկանքը՝ Հայաստանի Հանրապետության Սահամանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի քարոզչության հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգմամբ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

Վերոգրյալի հիմք ընդունմամբ՝ ամփոփելով հանրաքվեի արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության Սահամանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Կենտրոնական հանձնաժողովը, սույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում ամփոփում է հանրաքվեի արդյունքները և ընդունում հետևյալ որոշումներից մեկը.

1) հանրաքվեի դրված նախագծի ընդունման մասին.

2) հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.

3) հանրաքվեի դրված նախագծի չընդունման մասին.

4) հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու և նոր քվեարկություն նշանակելու մասին»:

Վերոգրյալը՝ հիմք ընդունելով և ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի դրված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծն ընդունված է:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելուց հետո (պաշտոնական հրապարակում)՝ հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ 5-րդ օրը, մինչև ժամը 18.00-ն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**